

ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ՍՓՅՈՒՈՔԱԶՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Նոնա Դավթյան

ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղ

Բանալի բառեր- տարեգրության ժանր, մանկության վերհուշ, սուգի օրեր, կորուստների ցավ, վերապրող սերունդ, կարոտ, նահանջ, ինքնալքում, ուղևորավեպ, ազգային նկարագիր:

Տարեգրության ժանրի՝ փաստագրական սկզբնաղբյուրի առաջին նմուշները հայ գրականության մեջ երևան եկան դեռևս միջնադարում՝ 11-12-րդ դարերում, պատմագրական արձակում: Ժանրի հիմնադիր համարվում է Մատթևոս Ուռնայեցին, ով իր երկասիրությունը շարադրել է՝ պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը: Ուռնայեցուց հետո տարեգրության ժանրային սկզբունքներով շարադրված երկերից է Սմբատ Գունդստաբլի «Տարեգիրքը», որն արժեքավոր և հարուստ տեղեկություններ է շարադրում Կիլիկիայի հայոց թագավորության, ինչպես նաև հարևան տերությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ:

Քսաներոդ դարասկզբի արձակում տարեգրության ժանրի փաստագրական ճշգրտությանը գումարվում են գրողի գեղարվեստական մոտեցումները, որոնք տարբեր գուներանգավորումներով երևակվում են ինքսկենսագրական երկերում: Ժանրի բացառիկ օրինակներից են Գուրգեն Մահարու կենսապատում-հնգապատումը, Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը, Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը:

Գեղարվեստական տարեգրության սկզբունքները ինքնահատուկ երանգավորումներով դարձան նաև սփյուռքահայ գրականության տրոփը: Իրական կյանքն իր ամբողջությամբ, մարդկային խեղված ճակատագրերը, հեղինակի ու հերոսների մտորումները, վերագտնելու ճիգերը դարձան սփյուռքում ստեղծվող գրականության ակունքը:

Եղեռնից փրկված սերունդը ապրեց անցյալի վերհուշով, կարոտով, որը երազային կապույտ թռչնակի թևերին թառած հետզհետե կորավ մշուշներում: Արձակի թե՛ փոքր, թե՛ լայնակտավ երկերում որբանոցի սերունդը գրականությամբ փրկեց իր և իր նման հարյուրավորների կյանքը: Վանը, Մեղիբեն, Արմտանը, Արմաշը, Ակնը, Ռոդոպթոն գեղարվեստական տարեգրության սկզբունքներով են գրականություն բերվում, ապա՝ սուգի օրերը, տարագրության բավիղները, նոր միջավայրը, մարդիկ վերարտադրվեցին լուսանկարչական ճշգրտությամբ: Այդ պատմությունները անմոռանալի ու նվիրական հուշեր են, որոնք պարտադրում են անհետացումից փրկել այն, ինչ պատկանում էր իրենց, բայց խլվեց յաթաղանի ուժով: Գրողին խոսեցնողը կարոտը, ցավն ու ցասումն են, նաև սպասումները, կորսված հայրենիքը վերագտնելու սրբազան հույսը: Գեղարվեստական տարեգրության բացառիկ

օրինակներ են Համաստեղի ու Մնձուրու արձակ պատումները: Փոքր կտավի այս ստեղծագործություններում հաճախ հերոսը նույնանում է հեղինակի հետ, ով տարիների հեռավորությունից գրչով անմահացնում է իր ապրած միջավայրը, դեմքերն ու հիշատակները: Համաստեղը իր և հերոսների՝ Տափան Մարգարի, Փիլիկ աղբոր, Պալիկ հորքուրի, փեսա Օվանի, Մակարի տղա Մարգարի, Երանոսի, ծննդավայրի պարզ ու անմիջական մարդկանց ապրած կյանքն է տարեգրում. վրձնվում են էրգրի հին ու բարի մարդիկ, և հեղինակին մնում է «ճակտին վրա կնճիռներ շարելն ու դեմքին վրա զանազան գիծեր ձգելը»: Ահա վարժապետը, ով գրատախտակին «քերականական վերլուծումի» համար գրել են, թե «Արարատը աշխարհի ամենագեղեցիկ լեռն է», Երանոս աղբարը, ում համար անբացատրելի զգացումներ են արթնացնում էրգրից բերված թուփը, որի «համը իր մարմնին մեջ դաշտանկարի մը պես տարածվեց», ծերունի Օհանի նվիրվածությունը հողին, ով տարագրության քվոդ կարավանի մեջ քայլելիս չի մոռանում իր արտն ու այգին և անցնող գյուղացուն պատվիրում է Թութկանց Միքայելին ասել, որ «կավառ կա շտկելու», որպեսզի ջուրը զուր չհոսի, բամբակին ջուր հասցնի:

Հ. Մնձուրին ևս «հայրենականներու մեջ տեսարան մը, պահ մը, անկյուն մը» տվեց, ինչպես հաճախ շեշտում էր՝ բառերով նկարչություն արեց: «Կապույտ լույս» և «Արմտան» ժողովածուներում բազմաբղետ գույներով նկարագրեց հայրենի գյուղի, գյուղացիների՝ Տյուկե Մամայի, Տաղլուենց Մարոյի, Շիրինի, Նարոյի կերպարները: Նրա հերոսներից Տեմիրճենց մեծ պապը իր պապն է, ինքը՝ Ակոբը, մայրը, տատը՝ մարդիկ, ովքեր բարձր էին գնահատում իրենց ազնիվ աշխատանքը, տունն, օջախը անմար պահելու գաղափարը. «օճախը չմարիլը, մեջը մարդ ըլլալը, անունը չկորսուիլը»: «Հիմա այս հերոսները հոն չեն, հիմա ալ բամբուսիկները նորեն կբուսնին, արդյոք, կըսեք»[1],- հերոսի անունից լալախառաչ հարց է հնչեցնում Մնձուրին: Հայրենի գյուղը ավերակվում է .«Այս բոլորը գեշ էրագի մը պես եկան»[2], - նկատում է Համաստեղը:

Ինքնակենսագրական տարեգրության ժանր է նաև Վահե Հայկի արձակ զինանոցը, մանկության օրրանը, ուր «ապրեցա բարի ու միամիտ երագներ, գեղջուկ տնակի մը մեջ, անհոգ ու բոպիկ ոտքերով, խարտեաշ մազերս հովերուն»[3]:

Արձակագրի համար հեքիաթային, անմեկնելի կախարդանք ունեն ծննդավայրը, գյուղի աղբյուրը, որն իր անուշ երգով ելևէջում է գրողի հոգում, հիշեցնում անդարձ կորուստները: Հողմաշունչ օրերը քշել-տարել են ամեն ինչ, բայց արմատախիլ անել հիշողություններից անցյալի հիշատակները, մանկության երազը, անհնարին էր: Հիշողության գույներով հեղինակը ներկայացնում է հին գյուղը, բարի ու աշխատասեր մարդկանց, տեսլանում են հոր լուսավոր կերպարը, այգին, որն այլևս լքված է իրական տերերից, ինչպես հեռվում մնացած բոլոր այգիները՝ ամայի, անշունչ, մահվան խորշակն է

թափառում ամենուր. «Հիմա լքված է ան, մեր այգին, ինչպես բոլոր այգիները...»[4]:

Շավարշ Նարդունին նույնպես ընթերցողին տեղափոխում է հարազատ ժողովրդի անցյալը, երբ կյանքն անուշանում էր գեղջուկի հորովելներից, հայ մամիկի քաղցրածոր աղոթքներից, դպրատան պատերի ներսում մանուկի շուրթերից հնչած այբուբենից: Բայց թուրքի բարբարոս ձեռքը ավերեց ամեն ինչ, և օդում կախվեց հարյուրավոր անպաշտպանների ճիչը, երկինք պարզված ձեռքը բռունցքվեց ցավից, այբ-ը քարացավ մանուկի շուրթին... «Ապրիլ ամսուն իմ գիւղս ալ մեռաւ: Ու հիմա գիւղ չունիմ ես: Ինկեր եմ օտար գետերու ափը, ուռենիներու վրա կախեր եմ քնարս եւ կուլամ միտքս բերելով իմ գիւղս...»[5] - գրում է Շ. Նարդունին և «իմ գյուղս, ինչպես մատներս են իմս» ստացական հոդով հյուսում իր գյուղի երգը: Տառապանքների, ջարդի, ապրած սարսափների վկայությունն է Նարդունու «Աքսորի օրագիր» անավարտ օրագրությունը, որտեղ նկարագրում է հայրենի Արմաշի տարեգրությունը: Օրագրային գրառումներն արձակագիրը սկսում է 1915-ի օգոստոսի 13-ից, երբ արմաշցիները, անորոշության սարսափն աչքերում, հեռանում են նվիրական գյուղակից, և այդ երթը ձգվում է մինչև Ադաբասար:

Իր կյանքի դժնի օրերն է տարեգրում Երվանդ Օտյանը ««Անիծյալ տարիներ. 1914-1919 (Անձնական Ցիշատակներ)» գրքում:

Մատնություններ, բանտ ու աքսոր, և այդ լաբիրինթոսը ծայր է առնում Պոլսից Նիկոմեդիա, ապա հասնում Տարսոն ու Հալեպ: Ճակատագրի անտեսանելի ձեռքը բռունցք դարձած հարվածում է նրան՝ այս անգամ նետելով Գոնիա, որտեղից էլ Սուլթանիե, իսկ մի քանի ամիս հետո նրան հաջողվում է վերադառնալ Պոլիս: Օտյանը այդ օրերի մասին գրում է. «Իր սկզբնավորությանը մեջ, չէի ըմբռնած աղետին մեծությունը, ու երբ 1915 թ. սեպտեմբերի 13-ին տարագրվեցա ու ակնառես եղա հարյուրավոր մեռնողներու, նոր զգացի, որ ամեն մեկ անհետացող հայու փոխարեն իմ ալ հոգիես մասս մըն է որ կը պակասի»[6]:

Տարեգրության ժանրի մատույցներում է նաև Երվանդ Օտյանի «Հայ տիսաբորան» երկը, այն հեղինակը անվանել է «Ժամանակակից վեպ հայ հալածական կեանքէ»: Վեպը որպես թերթոն հրատարակվեց Կահիրեի «Արեւ» օրաթերթում՝ 1924-1925 թվականներին, առանձին գրքով՝ 1999-ին Հենրիկ Բախչինյանի խմբագրությամբ՝ Երևանի Գրականության և արվեստի թանգարանի կողմից: Վեպի հերոսները մահվան ճանապարհներն անցած, հայրենիքն ու հարազատներին կորցրած սերունդն են: Մեծ երգիծաբանը ողբերգականի կողքին երբեմն նուրբ ու ներողամիտ, երբեմն էլ սպանիչ ծաղրի է ենթարկում հաշվենկատ բարսեղների տիպերը, մտահոգություններ հայտնում սփյուռքի ներկայի ու անհեռանկար ապագայի հանդեպ, որքան է հայի ցեղային «տոկունությունը», կկարողանա՞ արդյոք պահպանել ինքնությունը, թե արագորեն կտարրալուծվի ապահայ հոսանքների մեջ:

Ազգաջնջումի, անապատի խոշտանգող իրականության, սով ու համաճարակ տեսած, որբանոցի սերնդի շարքերում է Վազգեն Շուշանյանը: Շուշանյանը նկարագրեց երեք միջավայր՝ հայրենի Ռոդոսթոն, աքսորի, մահվան ճամփաները և վերադարձը ավերված գյուղ: Ինչպես պոեմում, այդպես նաև արձակ երկերում, անցյալի սովերները տեսանում են, մանկության ոսկե հեքիաթն է հյուսվում, ապա հեղինակը մտովի դեգերում է աքսորի անլուր տառապանքներով լի ճանապարհներով, հասնում մինչև ներկան՝ «անդեմ ու տրտում» ֆրանսիական քաղաքի պանդոկներից մեկի փոքրիկ սենյակ: Իր ստեղծագործությունների մասին խոսելով՝ Շուշանյանը նկատում է. «Եթե ոչ դիպախաղը՝ գործող անձերը սակայն առած են իրականութենեն»[7]:

«Միրո և արկածի տղաքը» վեպում Շուշանյանը ամբողջացնում է իր և ճակատագրով որբության դատապարտված հոգեկից ընկերների կյանքը, որբանոցներում կրած տառապանքները:

«Միյուռքահայ գրականության մեջ թերևս չկա մի հեղինակ, որի ստեղծագործությունն այդքան ինքնակենսագրական լինի, ինչպես Վազգեն Շուշանյանինն է»[8]- նկատում է գրականագետ Ա. Թոփչյանը:

«Միրո և արկածի տղաքը» վեպը առաջին անգամ լույս տեսավ 1929 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Վեպում երկու բախտակից ընկերների՝ Երվանդի և Վահրամի Կովկասում անցկացրած օրերի նկարագրությունն է, որտեղ բացվում է փրկված հայրենիքի վարագուրված պատկերը: Երվանդի (հեղինակի) և Վահրամի (նախատիպը հավանաբար Լևոն-Զավեն Սյուրմեյանն է) համար հայրենիքը չդարձավ հանգրվան, այլ մի վայր, ուր շարունակվեց նրանց որբությունը, նրանք «պանդուխտներ» էին իրենց իսկ տանը, ուստի ստիպված եղան նորից բռնել գաղթի ճանապարհը. «Ուշ գիշերին փախանք գող մարդոց պէս, ես ու ան, երկու պզտիկ տղաք, կծկուած աղտոտ երկաթուղակառքի մը անկիւնը, կորսուած մեր յիշատակներուն խորը...»[9]:

Երվանդ-Շուշանյանի հայրենիքում մնալու կռվան կարող էր դառնալ Արփիկի հանդեպ տածած սերը, սակայն բոլշևիկյան գաղափարապաշտությունը ներքին երկընտրանքի առաջ է կանգնեցնում նրան, Երվանդը գոհաբերում է սերը հոգուտ երկրորդի՝ մշուշներում մնացած էրգրի տեսիլքի: Եվ նրանք որոշեցին վերադառնալ «մե՛ր Հայաստանը», որովհետև այն, որ կար «դարձած է կրկին Ռուսաստան»[10]:

Մանկության հուշերին ավելի ուշ վերադառնում է բանաստեղծական ժողովածուներով իրեն հաստատած Մուշեղ Իշխանը: Նա գրեց իր կյանքի վեպերը՝ «Հացի եւ լոյսի համար», հրատարակվել է Բեյրութում 1951 թվականին, որին շարունակում են «Հացի եւ սիրոյ համար», իսկ 1974-ին՝ «Մնաս բարով, մանկութիւն» հուշապատումները: Հեղինակի տեսադաշտում աքսորի ճանապարհներն են, ուր «ինք ստիպուած էր ահա ակնատես յուղարկաւորը ըլլալու իր մեռած մանկութեան եւ նրբագարթ երագներուն...»[11]:

Դիպաշարի հիմքում հանապազօր հացի համար չորս ընկերների պայքարի նկարագրությունն է: Ամենօրյա ծանր աշխատանքը, անոթի վիճակը նրանց տանում են անհուսության դուռը: Ընկերներից Սեդրակը նույնանում է հեղինակի հետ: Ճակատագրով դատապարտվածների մեջ է նաև Սեդրակի ընկեր Վահրամը, ով մեռնում է՝ իր հետ տանելով իր երագները՝ աղաղակել ողբերգություններ ապրած սերնդի ցավը. «Տեր Զօրի իր յուշերը գրի պիտի առնեք, պիտի պատմեք, թե ինչպես փրկուեցաւ ջարդի սարսափներէն, եւ պիտի տեսնէին, թէ ինչ ռուման է իր կեանքը...»[12]:

«Մնաս բարով, մանկութիւն» վիպակի աղերսները բխում են նախորդներից. թափառումներից ուսման տանող ճանապարհներ, ապա գրական մկրտություն:

Հիսունական թվականները ինքնակենսագրավեպի վերելքի տարիներն էին, ժանրի վերելքը պայմանավորող արձակագիրներից է Անդրանիկ Ծառուկյանը: «Մանկութիւն չունեցող մարդիկ» խորագրով հեղինակը մանկություն չունեցող սերնդի պատմությունն է անում: Վիպակը հրատարակվեց Բեյրութում 1955 թվականին:

Հալեպի ամերիկյան որբանոցի՝ «մայրիկների» ու «հայրիկների» հոգաձության տակ մեծացող սերնդին ճակատագրով բաժին հասած որբությանը միանում են որբանոցի դառնությունները, սովն ու անմարդկային ծեծը: Հեղինակը ցավալիորեն գիտակցում է, որ աշխարհում ամենից թշվառը իրեն, իր ընկերներին բաժին հասած մանկությունն էր, որովհետև հայ էին, անոթի, կիսամերկ, մորթվող հարազատների տառապանքը տեսած, հոգում նրանց հանդեպ կարոտը պահած, որբանոցի կարգ ու կանոնին, անմարդկային վերաբերմունքին չհարմարվող: Ահա Պետրոսը, ով զարհուրելի գոռոցներով վեր էր թռչում գիշերները և աղաղակում՝ «Եկա՛ն, եկա՛ն», որովհետև նրան հանգիստ չէին տալիս մորթվող մոր և եղբոր մղձավանջային տեսարանները, Արթինը, ով վեց տարեկանում արդեն տիրապետում էր գողանալու «արվեստին»: Խեղված ճակատագրերի հետ խեղվում էր նաև հոգին, սիրո, մանկական խաղերի փոխարեն նրանց մեջ ծնվում են ատելությունը, գոյատևելու պայքարը, մի կտոր հացի համար «կրնայինք զգվրտիլ, խածնել, արյունել»:

Երվանդ Օտյանի հետ որբերի հանդիպման պատմությունը մեզ հիշեցնում է Մահարու՝ Թումանյանի հետ հանդիպման տեսարանի նկարագրությունը: Եվ ընդհանրապես, երկու արձակագիրների մոտ կա վիպելու, ապրածը վերարտադրելու, ծանր ու ցավալի օրերի նկարագրության մեջ նուրբ ու ներողամիտ ժպիտ դնելու ընդհանրական գիծը: Թեև այդ կյանքը մնայուն զրկանքներով էր լի, բայց արձակագիրը հոգու գաղտնարաններում ունի պահած կարոտ հին օրերի հանդեպ, հոգեվարքից առաջ մեկ օր ևս ապրելու հնարավորության դեպքում կլինորեր իրեն վերադարձնել մանկությունը, մեկ օր ապրել որպես մանուկ:

«Երագային Հալեպը» Ա. Ծառուկյանը գրեց ավելի ուշ՝ 1970-ականների երկրորդ կեսին: Թե՛ նախորդ, թե՛ այս վիպակներում նա պատկերեց մնացորդաց

սերնդի կյանքի շարունակական պատմությունը՝ դառնալով սփյուռքյան կյանքի տարեգիրներից մեկը: Արձակագիրը, տարեգրելով իր և իր ընկերների կյանքի որբանոցային տարիները, սահմանափակվում և նպատակ չի հետապնդում ներկայացնել, թե ինչ ճակատագիր պահվեց նրանց որբանոցից հետո: Կարևորը ըստ հեղինակի, այն է, որ այս մարդիկ՝ մեծահարուստ թե թշվառ, արվեստագետ թե արհեստավոր, խլյակներն են կյանքի, որովհետև. «Կեանքը գաղտնիք չունի այլևս անոնց համար, օրերը պատրանք չունին, որովհետև մանկություն չունին»[13]:

Նախորդ դարի 60-ականներին ամերիկահայ արձակում իր կայուն տեղն է գրադեցնում Հակոբ Ասատուրյանը: Նրա արձակը նույնպես խմորվում էր վերհուշից, խոսում տարագիր հայի դեգերումների մասին, օտար ու անհյուրընկալ երկրում իրեն վերագտնելու ճիգերը նկարագրում: Եղեռնից փրկվածների մեջ էր Հակոբ Ասատուրյանը, նրա հիշողություններում մնացել էին 15-ից 18 կամրջող տարիները, երբ անցնող խմբի 331 հոգուց «ողջ թողուցին միայն 29 հոգի», որոնցից մեկը հեղինակն ինքն էր: Եռագրության առաջին մասը գրողի մանկության գյուղն է՝ Չոմախլուն, ուր ապրում էին Հովակիմի պապերը: Մակայն եղեռնը որպես հեղեղ գալիս և մղելի պես «անապատի չորս հովերուն» է ցրում Չոմախլուի պարզ ու անմիջական մարդկանց: Վեպի երեք մասերում՝ «Մեր գյուղը», «Անապատի կողմն աշխարհի», «Արաբական զիշերներ», հեղինակը լուսանկարչական ճշգրտությամբ վերարտադրում է գյուղի ու նրա ստեղծարար բնակչի կյանքը, բարքերը, կենցաղը, հողի ու աշխատանքի հանդեպ բացառիկ նվիրումը, ապա արքայի ճանապարհները, կորուստների ցավը և արաբական Պոսեյրա գյուղում իրենց վերագտնելու ճիգերը: Պատանի Հարությունը ականատես է և իր մաշկի վրա կրում է տառապանքները, շատերի պես մաքառում ապրելու համար: Գաղթի երթը ձգվում էր դեպի արաբական ավազուտները, ուր Հարությունը կորցնում է հարազատների, մեռած մորը նետում վիհը և փախչում խելացնոր: Երկրորդ գիրքը՝ «Հովակիմի թոռնորդիները», հրատարակվեց 1982-ին, այն շարունակում է առաջին վիպակին. աներկինք, անհող մնացած սերնդի տարեգրությունը հյուսվում է նոր միջավայրում: Թոռների սերունդը Ամերիկայում է, նրանց առջև ծառանում է նոր երկրում ազգային ոգու պահպանման խնդիրը: Գիրքը հեղինակի ընդվզումն է նահանջի դեմ: Լևոնին որդու ուսուցչուհին գրություն է ուղարկում, որտեղ հանդիմանում է տանը «օտար» լեզվով խոսելու համար, ինչը խանգարում է որդու ուսուցմանը, ասել է թե օտարոտի շեշտը ներմուծվում է խոսքի մեջ: Նահանջը ներթափանցում է ընտանիքներից ներս, ոգին, ազգային նկարագիրը քայլ առ քայլ կորցնում են իրենց ուժը: Պայքարողները, թվում է, անգոր են պատնեշի վրա մնալու և «գիտությամբ, թե անգիտությամբ, կամա, թե ակամա» (Շ. Շահնուր) գնում են ուժացման խորխորատները:

Հովակիմի թոռնորդիները սփյուռքի երրորդ սերունդն են, ուստի չկան այն արժեքները, որոնց համար արժեր պայքարել, նրանցը միմիայն արյան

բաղադրությունն է: Քչերը գիտակցում, հույսով են լցվում իրական խորհրդային դրոշներով փողփողացող հայրենիքի հանդեպ: Եվ՝ երկիրը Նաիրի, և՛ հայրենիքն արևելյան նրանց համար դառնում է սոսկ ուխտավայր:

Եռապատումի երրորդ գիրքը՝ «Տո, լաճ տնաւեր», լույս է տեսնում 1986 թվականին, Նյու Յորքում: «Ուղեւորավէպ»- այսպես է բնութագրել իր գիրքը Ասատուրյանը: Հերոսները, որոնք ամերիկացիներ են, վերադառնում են հայրենիք որպես ուխտավորներ: Հայրենի Չոմախլուում արդեն անհնարին էր գտնել հին հիշատակները, հերոսին մնում է միայն ծխացող հուշը: Հայրական օջախում թուրքն է բնավորվել, որոնց համար չկա անցյալ, կա միայն ներկան, ուստի նրանց խորթ են անծանոթ այցելուների ապրումները, հոգու ցավից ու կարոտից ծնված ճիչերը: Վեպի ուշագրավ տեսարաններից է եկեղեցու՝ ուխտավոր հայ մարդու աղոթքից քսանհինգ րոպե հետո փլուզումը: Կարապետի ու Տիգրանուհու համար սրբություն է անցյալը, նորոգվում է ցավը, ճմլվում, կուչ է գալիս կարոտը. որը նորից ծնում է ինքնության համար պայքարի զգացում: Լեզվի նահանջը, հայի փրկությունը դառնում են Հ. Ասատուրյանի ստեղծագործությունների գլխավոր հարցականները, և հեղինակը պատրաստակամ է պայքարել, պատնեշի վրա մնալ մինչև վերջ, եթե անգամ 99 տոկոսը այլևս չի կարողում հայատառ գիրք կամ թերթ, ապա «ան կը յամառի գրել մնացած մէ՛կ տոկոսին համար»[14]:

Լեզվի պահպանության և ազգային ոգու ամրության տազնապը մտահոգում էր նաև Մ. Իշխանին, ով նկատեց, որ օտարության մեջ հայ մարդու «հոգեկան բերդի պարիսպները խոշոր ճեղքեր ստացած են: Տրովադայի ձին բերդեն ներս սահած է, մեր մեջ է արդեն: Ժամանակ է ահագանգը լսելու»[15]:

Տարագիր հայի գլխին կախված մեծագույն հարցականն է այս՝ «Պիտի մոռանա՞ս լեզուդ...»:

Նույն մտավկող խոհը ինքնահատուկ վրձնահարվածներով է երևում Սմբատ Փանոսյանի արձակում: Նորից արաբական միջավայրի նկարագրություն, ուր հայությունը փորձում է վերագտնել իրեն և կայունանալ, պայքարի դրոշ բարձրացնել ուժացման դեմ: Ի տարբերություն Շահնուրի պիեռ-պետրոսների, Ս. Փանոսյանի հերոսը օտարուհիների հմայքը տեսնելով ու գնահատելով, կարողանում է դուրս գալ զգացմունքի գերությունից և հավատարիմ մնալ ազգային արմատներին: Մուրատը, ով «արաբական անապատի շնչառությւնը լսել գիտէր», լուսավորվում է իրական հայրենիքի՝ Հայաստանի գոյության փաստից: Վեպի հուզառատ հատվածներից մեկը Մուրատի մենության, հոգում ծնված ներքին երկխոսության պահն է. որտեղից որտեղ ծնվում են Պատկանյանի երգի տողերը՝ «Մայր Արաքսի ափերին... », նույն պահին ներքին մի ձայն սաստում է նրան, ստիպում լռել. «Լռէ՛, կ'ըսես քեզի, երգելու ժամանակ կը գտար... Անապատը գերեզմանն է քու ցեղիդ»[16]:

Արամ Հայկազի հերոսը՝ Արամը, նույնպես երազային սիրո հետևից չի քայլում, նրա մեջ զույգ էր բարձրացրել հայը, ցեղային գենը: Մուսլիմ-Արամը՝

հեղինակն ինքը, Շապին-Գարահիսարից էր: Քաղաքի հերոսամարտի տխուր ավարտից հետո շատ հայ ընտանիքներ բռնում են տարագրության ուղին, նրանց մեջ նաև Արամը, մայրը և եղբայրը Հայկազը: Ճանապարհին Արամի աչքի առաջ սպանում են մորն ու եղբորը: Մահից առաջ մայրը հորդորում էր նրան կրոնափոխ լինել՝ փրկվելու համար: Փրկվեց մի կերպ, իսկ հարազատները մնացին մահվան ճամբարներում: Արամին, Մյուսլիմ անունն են տալիս, և նա մեծանում է քրդական ընտանիքներից մեկում, բայց սպանել նրա մեջ ցեղային նկարագիրը՝ անհնարին էր, ահա թե ինչու Արամը, չորս տարի մնալով Քուրդիստանի լեռների մեջ, չմոռացավ իր ծագումը. ուշ գիշերներին մի քանի հայ տղաներով ու աղջիկներով հավաքվում էին և կարծելով, թե միայն իրենք են ջարդերից փրվել, սկսում են գաղտնի խոսել հայերեն՝ փրկելու հայր, հայկականը, իրենք իրենց: Նրան մտատանջում էր այն հարցականը, թե ինչու՞ և ո՞րն էր պատճառը, որ հայը կորցրեց իր պապենական հողը, գուցե այն, որ միշտ ապավինել էր Բարձրայիին և եթե աղոթքի փոխարեն կոեր իր կամքը, խոփի փոխարեն՝ սուրը, տեր կլիներ «վարը կապտաուուն մշուշին մեջ լողացող երկիր»-ին[17]:

Այն միտքը, որ հայերը Վանում անկախ պետություն են հիմնել, խլում է պատանու աչքերի քունը. «Ցեղս է, որ կը կանչե զիս»- նկատում է նա: Նժարին է դրվում սեր, թե հայկականություն, և ծանրությունը, ի վերջո, երկրորդի կողմն է: Պապերի հավատքն ուրացած, «ստորնացած, ստրկացած, շան պես ծեծուած ու հալածուած»՝ Արամը փախչում է լեռներից, Պոլսում գտնում հորաքրոջը:

Ո՞րն էր պատճառը պատմական հայրենիքի կորստի, ի՞նչ սպասումներ ունի հայրենիքից դատարկված, օտարության մեջ գոյությունը մի կերպ քարշ տվող հայր, կկարողանա՞ արդյոք պահպանել իր դիմագիծը, և ի՞նչը կդառնա խթան հային հայ պահելու: Գաղափարական նմանատիպ հարցադրումները մինչ այսօր այն օրակարգային հարցադրումներն են, որոնց պատասխանները գրականությամբ յուրովի մոտեցումներով պատասխանեցին սփյուռքում ստեղծագործող գրողները: Իսկ ազգային հիշողությունը լավագույնս պահպանվում է գրականության մեջ, ուստի ժամանակն անգոր կլինի մանկուրտության մատնել քսաներորդ դարասկզբի մեծագույն ողբերգությունը:

Գրականություն

1. Հակոբ Մնձուրի, Երկեր, Երևան, 1986, Սովետական գրող, էջ 417:
2. Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, Խորհրդային գրող 1989, էջ 52:
3. Վահե Հայկ, Հայրենի ծխան, Հայպետհրատ, Երևան, 1960, էջ 334:
4. Նունը, էջ 335:

5. Շավարշ Նարդունի, Մեղեդիներ՝ ր, մեղեդիներ՝ ր, Փարիզ, 1933, էջ 70:
6. «Շանթ», 1919, թիվ 16, էջ 187:
7. Վազգեն Շուշանյան, Ճերմակ Վարսենիկ, Սովետական գրող, Երևան, 1983, էջ 15:
8. Ալեքսանդր Թովչյան, Ապագայի ներկայությամբ, Սովետական գրող, Երևան, 1988, էջ 196:
9. Վազգեն Շուշանյան, Սիրոյ եւ արկածի տղաքը, Պէյրութ, 1957, էջ 45:
10. Նույն տեղում, էջ 27:
11. Մուշեղ Իշխան, Հացի եւ լոյսի համար, Պէյրութ 1951, էջ 18:
12. Նույն տեղում, էջ 226:
13. Անդրանիկ Ծառուկեան, Մանկութիւն չունեցող մարդիկ, Երագային Հալէպը, էջ 12:
14. Հակոբ Ասատուրեան, Տո՛ւ, լաճ տնաւեր, Նիւ Եորք, 1986, էջ 8:
15. Մուշեղ Իշխան, Տրովադայի ձին. «Մարմարա» (Պոլիս) 11.07.1969, էջ 2:
16. Սմբատ Փանոսեան, Որ մրրկաւ էին գատուած, Պէյրութ, 1953, էջ 36:
17. Արամ Հայկազ, Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ, Անթիլիաս, 1972, էջ 211:

Ամփոփում

Տարեգրության ժանրը, որի ակունքները դեռևս միջնադարյան պատմագրության մեջ պետք է փնտրել, ինքնահատուկ գույներ ձեռք բերեց 20-րդ դարի ինչպես խորհրդահայ, այնպես էլ սփյուռքահայ գրականության մեջ: Ժանրի բացառիկ ստեղծագործություններից են Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ս. Զորյանի կենսապատմները:

Հ. Մնձուրին, Շ. Նարդունին, Վահե Հայկը, Արամ Հայկազը, նրանց հետև նրանց կողքին շատերը տարեգրեցին իրենց և էրգրի պարզ ու անմիջական մարդկանց կյանքը, սուգի օրերը, գաղթի բավիղները՝ գրեթե լուսանկարչական ճշգրտությամբ:

Հոդվածը համեստ փորձ է, որում քննության է դրվում տարեգրության ժանրի՝ սփյուռքում ստեղծված գրական արժեքներին:

Летописный жанр в литературе диаспоры

Нона Давидян

Резюме

Ключевые слова: летописный жанр, воспоминания детства, дни скорби, боль потеря, возрожденное поколение, ностальгия, отступление, отречение, основной роман, национальный образ (портрет).

Жанр летописи, зарождение которого следует искать в средневековой истории, особые оттенки индивидуальности приобрел в 20-ом веке, как в советской

армянской, так и в Западной литературе. Выдающимися творениями этого жанра являются автобиографические рассказы Г. Маари, В.Тотовенца и С.Зоряна.

Многие, как и А. Мндзури, Ш. Нардуни, Ваге Айк, Арам Айказ описали непосредственную жизнь простых людей своей страны, а также дни скорби, трудности эмиграции и воспроизвели новую среду их обитания до фотографической точности.

Статья - скромная попытка оценить литературные ценности летописного жанра западно-армянской литературы.

Chronicle Genre of Literature of the Armenian Diaspora

Nona Davidyan

Summary

***Key words:** chronicle genre, memories of childhood, days of sorrow, pain, loss, revived generation, nostalgia, retreat, self-oblivion, the main novel, national image (portrait)*

The origination of chronicle genre in the Middle Ages acquired specific shades in the 20th century in the Soviet Armenian and Western literature from the outstanding works of this genre are autobiographical stories of Mahari, V.Totovents and S.Zoryan. H. Mndzuri, Sh. Narduni, Vahe Haik, Aram Haykaz, Moushegh Ishkhan and many others provide a record of the lives of common and ordinary people of their country, as well as of a time of mourning, privations of life in emigration.

The article is a modest attempt to estimate the value of the literary genre of the chronicle in the Armenian diaspora literature.